ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հուլիսի 2025 թվականի N 852

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ «Կարգ») 32-րդ կետի 19-րդ ենթակետի «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ «Օրենք») 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի, նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԿՄՀՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/28» ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասանակից էր ճանաչվել «ՌԱՖԱՅԵԼՍ» ՍՊԸ-ն և գնահատող հանձնաժողովի կողմից «ՌԱՖԱՅԵԼՍ» ՍՊԸ-ի ներկայացված հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջներին մասնավորապես. բացակայում էր Հավելված 1.3-ը, դիմում հայտարարությունը (Հավելված 1) հաստատված չէր էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչպես նաև 2-րդ չափաբաժնի մասով համակարգի միջոցով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում բացակայում էր առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանումը, ապրանքնային նշանը, մակնիշը, արտադրողի անվանումը և տեխնիկական բնութագիրը:

Առաջնորդվելով «ԿՄՀՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/28» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.11 կետով և Կարգի 41-րդ կետով՝ մասնակցին առաջարկվել էր ծանուցման պահից1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Սահմանված ժամեկետում մասնակցի կողմից շտկում չկատարելու հիքով 2-րդ չափաբաժնի մասով հայտը գնահատվել է անբավարար և մերժվել: Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն մասնակցի կողմից սահմանված ժամկետում հայտի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելը կամ ամբողջական չշտկելը հանդիսանում է գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Համաձայն ՀՀ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի և հիմք ընդունելով վերոշարադրյալը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

Ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնման ընթացակարգի				Մասնակցի				Պատվիրատուի անվանումը	Իրավական հիմք	Այլ անհրաժեշտ տեղեկատվություն
ծածկագիրը	չափաբաժնի համարը	չափաբաժնի անվանումը	գնման գինը /ՀՀ դրամ/	Անվանումը	ՀՎՀՀ	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմանների չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
«ԿՄՀՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/28»	2	Դրսի SMD LED էկրան	10.000.000	«ՌԱՖԱՅԵԼՍ» ՍՊԸ	03030478	ՀՀ, ք. Հրազդան, Միկրոշրջան 59/16	18.06.2025	Հրազդանի Համայնքապետարան	«ԿՄՀՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/28» ծածկագրով հրավերի 8.11 կետ և ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետ	Առկա չէ

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

22 հուլիսի 2025թ.
ք.Հրազդան